Ապրիլ ամսոյս 1ին առաւօտեան 9½ ժամին կարճատև հիւանդութիւնից յետոյ հանգեաւ ի Տէր Մայր Աթոռոյս միաբան ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ Վարդապարեան Ջալալօղլուեցի, մօտ 90 տարեկան հասակում։

Հանգուցեալը 1808 թուին մտել է Մայր Աթոռս և 1812 թուին ստացել է Սարկաւագութիւն, և փոխադրուելով Ս. Հռիփսիմէի վանքը, այնտեղ միաբանակցել է։ 1831 թուին ձեռնադրուել է Արեղայ և կարգուելով Ս. Հռիփսիմէի վանուց վանահայր՝ անխոնջ աշխատութեամբ հոգ է տարել վանքի տնտեսական և նիւթական պիտոյից համար, նորոգելով վանքի սեպհական այգին և մի այգի ևս վանքի հիւսիսային արևմտեան կողմը տնկելով։ Իւր այս արդիւնաւոր պաշտօնավարութեան ժամանակ շինել է իւր ծախքով և աշխատութեամբ վանքի խաչկալը, որի ճակատին գրուած է հետևեալ արձանագիրը. «Ի Հայրապետութեան Տեառն և Տեառն ութերորդ Յովհաննու Կարբեցւոյ ամենայն Հայոց Կաթուղիկոսի կանգնեցաւ խաչկալս պատկերազարդ և ծաղկանկար արդեամբ և աշխատութեամբ Յարութիւն Վարդապետի Վարդազարեան վանահօր Սրբոյն Հռիփսիմեանց ի 10ն Սեպտ. 1841 ամի։»

Հանգուցեալը Հռիփսիմէում իւր եղած ժամանակ ընդերկար վարել է Մայր Աթոռոյս այգեստանեայց վերահսկողի պաշտօնը։ Ի վարձատրութիւն իւր ջերմեռանդն և արդիւնաւոր աշխատութեան՝ Բարեյիշատ. Ներսէս Ե. Կաթուղիկոսի հրամանով 1848 թ. ստացել է ծայրագոյն վարդապետութեան աստիճան։

Ս. Հռիփսիմէի վանքի վանահայրութեան պաշտօնը ընդերկար վարելուց յետոյ Հոգև. բարձրագոյն իշխանութեան հրամանով փոխադրուել է Մայր Աթոռս, ուր երկար ժամանակ վարել է ժամ. օրհնողի պաշտօն, եղել է Մայր Աթոռոյս դպրանոցում նաև վերակացու։

Հանգ. Բարեյիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոս կամենալով հանգուցելոյ ծերութիւնը մխիթարել և բազմաժամանակեայ արդիւնաւոր աշխատութիւնը վարձատրել՝ 1873 թ. ձեռնադրեց Եպիսկոպոս և շնորհեց եպիսկոպոսական պնագիէ։ Հանգուցեալը վարձատրուած է եղել և վարդապետական լանջական ականակուռ խաչով և ծաղկեայ փիլոնով։

Յարութիւն Եպիսկոպոս վարդազարեան, որ Մայր Աթոռումս յայտնի էր «Պապի» (մեծ հայր) մականուամբ՝ իւր հեզամիտ բնաւորութեամբ և պարզութեամբ սիրելի էր ամենքին։

Որովհետև Հանգուցելոյ ցանկութիւնն էր թաղուիլ Ս. Հռիփսիմէի մենաստանում, Ամեն. Տեղակալ Սրբազան Հայրը պատուիրեց պատշաճաւոր յուղարկաւորութեամբ հանգուցելոյ մարմինը փոխադրել յիշեալ մենաստանը ուր և թաղուեց օրինադրեալ կարգով։

Տէր լուսաւորէ Հանգուցեալ բազմաշխատ Յարութիւն Եպիսկոպոսի հոգին և Իւր սրբերի ու արդարների հետ իւր արքայութեան մէջ հանգուցանէ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.